Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2

№ 1 ՄԱՏԵՆՇԱՐ "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՕՊԵՐԱՏԻՎ„ԻՆ № 1

Հայաստանի Հանրապետ. Գրադ. 24

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՕՊԵՐԱՏԻՒՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

370
Ա34-ԿԱ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էլեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ
1919

Ա 92
2403
1/0.
Ա 97հ

№ 1 ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՕՊԵՐԱՏԻՎ"-Ի № 1

70
84-ԿԱ
364.5 (47.925)

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՕՊԵՐԱՏԻՒՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Եկեղեցաշարժ Տպարան Մայր Աթոռոյ

1919

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Միութեան նպատակն է փոխանակման ու պատման, տնային տնտեսութեան պիտոյքների արտադրութեան շրջանում աջակցել կարգի և բարեխղճութեան սկզբունքների տարածման, նոյնպէս և նպաստել Երևանի շրջանի սպառողական ընկերութիւնների մէջ մշտական յարաբերութիւններ ստեղծելուն, նրանց գործերին ուղիղ ընթացք տալուն ու զարգանալուն և կազմակերպել նրանց միահամուռ գործունէութիւնը, որը պետք է ուղղուած լինի նրանց նպատակների կատարելուն չափ յաջող իրականացման իրենց անդամների տնտեսական և հոգեկան բարեկեցութիւնը բարձրացնելու գործում։

§ 2. § 1-ում ցոյց տուած նպատակներին հասնելու համար Միութեան վերապահւում է՝

ա) Քննել և լուծել այն հարցերը, որոնք կառաջանան սպառողական ընկերութիւնների կեանքում։

բ) Ժողովել և հրատարակել մամուլի միջոցով սպառողական ընկերութիւնների ու նրանց միութիւնների գործունէութեան վերաբերող տեղեկութիւններ.

կատարել ամէն տեսակի հատազօտութիւններ. նոյնպէս և լոյս ընծայել պարբերական և այլ հրատարակութիւններ.

գ) Կառավարական և հասարակական հիմնարկութիւնների առաջ խնդրամատոյց լինել սպառողական ընկերութիւնների ու նրանց միութիւնների կեանքից բղխող պահանջների վերաբերեալ.

դ) Կազմակերպել դասախօսութիւններ, ընթերցանութիւններ, դասընթացներ, դպրոցներ, ցուցահանդէսներ, կազմել խորհրդակցութիւններ սպառողների ընկերութիւնների և նրանց միութիւններին վերաբերող հարցերի շուրջը.

ե) Հիմնել օժանդակող դրամարկղներ, բնալուծման (անալիտիքական) կայարաններ, նմուշների և այլ իրերի թանգարաններ, գրադարաններ, նոյնպէս և ուրիշ հանրօգուտ հիմնարկութիւններ.

զ) Նպաստել սպառողների ընկերութիւններին տեղեկութիւնների, խորհուրդների, ցուցմունքների և իրաւաբանական օգնութեան միջոցով.

է) Կատարել Միութեան ընկերութիւնների մէջ պարբերական և յանկարծակի քննութիւններ.

ը) Աջակցել հիմնարկութիւններին և անձնաւորութիւններին սպառողական ընկերութիւններ կազմակերպելու գործում.

թ) Աջակցել սպառողական ընկերութիւններին ծառայողներ գտնելու, կազմել վարձման բիւրօ և ստեղծել Միութեան և առանձին ընկերութիւնների անունից, նրանց յանձնարարութեամբ համաձայնութիւն ծառայողների հետ վարձման վերաբերեալ.

ժ) Առանձին ընկերութիւնների համար գտնել

շրջանառութեան միջոցներ, նոյնպէս և տալ այդ միջոցները հնարաւորութեան դէպքում իր հաշուին, նպաստել ընկերութիւններին ապրանքներ գնելու, կազմակերպել նրանց միահամուռ գնումները, գնել իր հաշուին, ընդունել յանձնաբարութեան (КОМИССЯ) հիմքերով և վաճառել ամէն տեսակի ապրանքներ Լիազօրների Ժողովի հաստատած հիմունքներով թէ կանխիկ և թէ ապառիկ.

ժա) Հիմնել սեփական ձեռնարկութիւններ, պահեստներ, հիմնարկութիւններ և բաժանմունքներ ապրանքներ պատրաստելու, պահելու, գնելու և վաճառելու համար.

ժբ) Պահել սեփական գործակալութիւններ ու գրասենեակներ ամբողջ Ռուսաստանում և արտասահմանում ապրանքների գնման և վաճառման համար.

ժգ) Ցանձն առնել ընդունել միջնորդութիւն և գործակալութիւն ապահովագրման ու փոխադրման բոլոր տեսակների վերաբերեալ, կազմակերպել նաև սպառողական ընկերութիւնների համար փոխադարձ ապահովագրում.

ժդ) Համաձայնութեան գալ միւս միութիւնների և առանձին ընկերութիւնների հետ այլ և այլ գործողութիւնների վերաբերեալ.

ժե) Կատարել Միութեան անդամներին կանոնադրութեամբ վերապահած բոլոր գործողութիւնները.

ժզ) Կատարել առհասարակ կօօպերատիւ գործի զարգացման ուղղուած ամէն տեսակի գործողութիւններ։

§ 3. Միութիւնը իրաւունք ունի բոլոր օրինական միջոցներով ձեռք բերել, գրաւ դնել և իր սեփականութիւնից հանել ամէն տեսակի շարժական և անշարժ

կայքեր, կնքել փոխառութիւններ, ընդունել աւանդներ, տալ, ընդունել մուրհակներ և շահել (ставить) նոցանից, փոխադրական մակագրութիւն տալ մուրհակներում (ставить бланки) և առհասարակ մտնել պարտաւորագրութիւնների մէջ՝ ու կազմել պարտաւորագրութիւններ, նոյն թւում և կառուցման իրաւունքը, ընդունել նեիրատութիւններ ու ժառանգել կտակների հիման վրա, լինել դատախազ և դատախազեալ դատարանում։

§ 4. Իր պարտաւորագրութիւնների վերաբերեալ՝ Միութիւնը պատասխանատու է իր գրամագլխով և կայքով, բացի այդ իր անդամների պարտադիր բաժնեվճարների եռապատիկ չափով (§ § 12 և 13)։

§ 5. Միութիւնն իրաւունք ունի անդամագրուել իր նպատակներին համապատասխան ուրիշ միութիւններին, ընկերութիւններին և հիմնարկութիւններին։

§ 6. Միութիւնը իր գործէութեան ընթացքում ղեկավարուում է ներկայ կանոնագրութեամբ և ենթարկուում է գոյութիւն ունեցող բոլոր օրէնքներին։

§ 7. Միութիւնը ունի կնիք իր անուան արտայայտութեամբ։

§ 8. Միութեան վարչութիւնը գտնուում է Երևանում։

§ 9. Միութեան հիմնադիրներ համարուում են այն ընկերութիւնները, որոնք ստորագրել են այս կանոնագրութիւնը։ Մինչև հիմնադիր ժողովը և վարչութեան ընտրութիւնը Միութեան անդամների ընդունելիութիւնը կատարուում է հիմնադիրների կողմից։ Այն ծախսերը և պայմանաւորումները (сделки) որ կատարել են հիմնադիրները մինչև Միութեան վարչութեան

ընտրութիւնը, Միութեան համար պարտաւորեցուցիչ են միայն Հիմնադիրների Միութեան Հիմնադիր Ժողովի կողմից ընդունելու դէպքում։

Հիմնադիր ժողովը գումարուում է այն ընկերութիւնների լիազօրների կողմից, որոնք հիմնել են Միութիւնը։ Ժողովին կարող են մասնակցել վճռական ձայնի իրաւունքով միայն այն ընկերութիւնների ներկայացուցիչները, որոնք մտցրել են մուտքի վճարը (§ 12)։

II ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 10. Միութեան անդամ կարող են լինել սպառողական ընկերութիւններն ու նրանց միութիւնները, նոյնպէս և շրջանում գտնուող այն միութիւնները, ընկերութիւնները, ընկերակցութիւնները, արտելները և մանր վարկի հիմնարկութիւնները, որոնք իրենց կանոնագրութեամբ կամ վերջինիս հետ միևնոյն նշանակութիւն ունեցող կանոնով կարող են կատարել ապրանքների միահամուռ գնում։

Ծանօթութիւն.—Միութեան աջակցութիւնից կարող են օգտուել և Միութեան չանդամագրուած սպառողական ընկերութիւնները, զեմստվային, գիւղատնտեսական պահեստները, գիւղատնտեսական ընկերութիւն-

ները, անայնագործական արտէլ-
ները և այլ կօօպերատիւները
լիազօրների ժողովի մշակած յա-
տուկ կանոններով։

§ 11. Միութեան անդամագրուել ցանկացող ընկերութիւնը կամ այլ հիմնարկութիւնը (§ 10) ներկայացնում է Միութեան Վարչութեան գրաւոր համապատասխան դիմում։ Այդ գրութեան մէջ պէտք է մատնանշուի, որ ընկերութիւնը ենթարկւում է այս կանոնագրութեան բոլոր որոշումներին և յանձն է առնում Միութեան գործերի վերաբերեալ պատասխանատուութիւնը սոյն կանոնադրութեան կանոնների հիման վրա։ Այդ գրաւոր դիմումին պէտք է կցւեն ընկերութեան կանոնադրութեան մի օրինակը, օրինական ընդհանուր ժողովի Միութեան մէջ մտնելու որոշման պատճէն և վերջին հաշուետուութեան տեղեկութիւնները ընկերութեան կամ այլ հիմնարկութեան վերաբերեալ։

§ 12. Ընկերութիւնը կամ այլ հիմնարկութիւնը մտցնում է Միութեան Վարչութեան կողմից Միութեան անդամների ցուցակը համաձայն կանոնադրութեան § 11-ում ցոյց տուած պահանջների և § 13-ի նրա սեփական փայի և պահեստի դրամագլխի երկ տոկոսի չափ մուտքի վճարը Միութեան գանձարան մտցնելու դէպքում։ Եթէ Վարչութիւնը կասկածների է ենթարկւում Միութեան անդամների ցուցակը ընկերութիւնը կամ հիմնարկութիւնը մտցնելու հարցում, նա այդ ենթարկում է Լիազօրների Ժողովի հայեցողութեան։

§ 13. Իւրաքանչիւր փայի արժէքը որոշւում է 1000 ռուբլի։ Իւրաքանչիւր ընկերութիւն Միութեան անդամագրուելիս պարտաւոր է մտցնել իր փայի հաշուին ոչ

պակաս քան մէկ ռուբլի՝ ընկերութեան իւրաքանչիւր անդամից։ Փայի միւս մասը լրացւում է կամ կամաւոր վճարներով կամ Միութեան ընկերութիւններին հասանելիք դիվիդենտներով և կամ գնած ապրանքների պրեմիաներով։ Այն ընկերութիւնները, որոնք ունեն 1000-ից աւել անդամ, պարտաւոր են աստիճանաբար կազմել երկրորդ փայը։

§ 14. Միութեան անդամները մասնակցում են նրա բոլոր գործերին իրենց ներկայացուցիչների այն թւի միջոցով, որը ցոյց է տրուած § 30։

§ 15. Միութեան իւրաքանչիւր անդամ պարտաւոր է՝.

ա) Ենթարկուել Լիազօրների Ժողովների բոլոր որոշումներին, որոնք հիմնուած կլինեն օրէնքի և ներկայ կանոնադրութեան վրայ.

բ) Բաւարարել բոլոր կարիքները հնարաւորութեան չափ Միութեան միջնորդութեամբ.

գ) Իւրաքանչիւր տարի Միութեան գանձարանը մտցնել Լիազօրների Ժողովի կողմից սահմանած պարտաւորեցուցիչ վճարները քննիչ-հրահանգիչ պահելու և Միութեան նպատակներին համապատասխան այլ ծախսերի համար.

դ) Իւրաքանչիւր տարի ներկայացնել իր գործունէութեան հաշուետուութիւնը այն ձևերով, որոնք հաստատուած են Լիազօրների Ժողովի կողմից.

ե) Ներկայացնել Միութեան Վարչութեան և Վարչութեան կողմից լիազօրուած անձնաւորութիւններին իր բոլոր գրքերը և վաւերաթղթերը.

զ) Փոխարել իրենց անդամների արտակարգ ընդհանուր_ժողովներ Միութեան առաջարկները քննելու

համար, եթէ Միութեան Վարչութիւնը այդպիսի դումարում անհրաժեշտ կգտնի.

է) Տեղեկացնել Միութեան Վարչութեան կանոնադրութեան և ընկերութեան վարչութեան կազմի իրաքանչիւր փոփոխման մասին և պատասխանել իր ժամանակին ու ճշտութեամբ բոլոր հարցապնդումներին։

§ 16. Միութեան իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի, ի միջի այլոց՝

ա) Օգտուել Միութեան բոլոր հիմնարկութիւններից՝ Լիազօրների Ժողովի կողմից հաստատած հիմունքներով։

բ) Լիազօրների Ժողովի կողմից հաստատած հիմունքներով օգտուել անհրաժեշտ ցուցմունքներից, քննիչների—հրահանգիչների և Միութեան Վարչութեան ու նրան ենթակայ մարմինների օժանդակութիւնից։

գ) Մացնել գրաւոր առաջարկներ Վարչութեան և Միութեան այլ մարմինների գործունէութեան վերաբերեալ և պահանջել այդ առաջարկութիւնների քննութիւնը Միութեան Վարչութեան, նոյնչափ և Լիազօրների Ժողովի կողմից (§ 32 կէտը)։

§ 17 Միութեան իւրաքանչիւր անդամ պատասխանատու է Միութեան վնասների վերաբերեալ, իսկ անանկութեան դէպքում, Միութեան պարտաւորագրութիւնների (обязательство) վերաբերեալ՝ իրենց պարտաւորեցուցիչ փայերի գումարի հոսպատիկ չափով։

§ 18. Միութեան անդամը կարող է Միութեան կազմից դուրս գալ գրաւոր դիմումով, հիմնուած ընդհանուր ժողովի որոշման վրայ, սակայն ոչ շուտ, քան ընթացիկ տարեայ վերջը և այն պայմանով, եթէ յիշատակած դիմումը ներկայացուած է ոչ ուշ, քան վեց

ամսուայ ժամանակամիջոցում մինչև ընթացիկ գործողութիւնների տարեայ վերջը։ հակառակ դէպքում ընկերութիւնից անդամը կարող է դուրս գալ միայն գործողութիւնների հետեւեալ տարին լրանալուց յետոյ։ Միութիւնից անդամի դուրս գալու օրը հաշուում է գործողութիւնների տարեայ վերջին օրը,

§ 10. Լիազօրների Ժողովի որոշմամբ կարող են արտաքսուել Միութեան կազմից այն անդամները, որոնք չեն կատարել իրենց և Միութեան կանոնադրութիւնները և կը խախտեն իրենց պարտաւորագրութիւնները Միութեան առաջ կամ կը գործեն պարզօրէն ի վնաս նրան։

Միութեան անդամը հաշուում է Միութիւնից դուրս եկած այն օրանից, երբ որոշում է կայացուած արտաքսման մասին Լիազօրների Ժողովի կողմից։

Միութիւնից դուրս եկած արտաքսուած անդամը կարող է պատասխանատուութեան ենթարկուել մի տարեայ ընթացքում միայն Միութեան այն վնասների վերաբերեալ, որոնք տեղի են ունեցել և պարզուել են մինչև Միութեան այն տարեայ գործողութիւնների հաշուետուութեան հաստատելը, որի ընթացքում նա դուրս է եկել։ Միութեան գործերի կամաւոր կամ ստիպողական դադարեցման դէպքում անդամների պատասխանատուութիւնը նրանց գործերի վերաբերեալ թէ այդ ժամանակամիջոցը մինչ այդ դեռ չի լրացել, տևում է մինչ այն պարագայ, երբ կը վերջանայ լուծումը։

§ 20. Միութիւնից թէ կամաւոր դուրս եկած և թէ արտաքսուած անդամներին, իրենց մացրած փայի գումարները դոցա հասանելիք դիվիդենտով և վերցուած ապրանքի պրեմիայով վերադարձնում է Վարչու-

թեան ներկայացրած դիմումի հիման վրայ երեք ամսեայ ժամանակամիջոցում այն տարեայ գործողութեան նկատմամբ, որի ընթացքում դիմումը ներկայացված է, հաշուետուութիւնը Լիազօրների Ժողովի կողմից հաստատելուց և ոչ այլ կերպ, քան բոլոր հաշիւները Միութեան հետ վերջացնելուց յետոյ։ Ինչպէս կամովին հեռացողը, նոյնպէս և Միութիւնից արտաքսած անդամը իրաւունք չունեն Միութեան դրամագլխի որև է բաժնի վերաբերեալ, բացի իրենց փայերից (§ 13)։

§ 21. Միութիւնից դուրս եկած անդամը կարող է նորից ընդունուել Լիազօրների Ժողովի յատուկ որոշմամբ։

III ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 22. Միութեան միջոցները կազմում են դրամագլխից՝ ա) հիմնական, բ) փայի, գ) պահեստի և դ) յատուկ (որոշ նպատակով կազմած)։

§ 23. Հիմնական դրամագլուխը կազմուում է, մուտքի վճարներից և իւրաքանչիւր տարեայ օգուտներից՝ յատկացուած ոչ պակաս, քան 10%։ Հիմնական դրամագլուխը նշանակուում է անշարժ, նոյնպէս և այլ կայք ձեռք բերելու նպատակով, սակայն Լիազօրների Ժողովի որոշմամբ կարող է գրտնուել և Միութեան շրջանառութիւնների մէջ։

§ 24. Փայի դրամագլուխը կազմուում է Միութեան ընկերութիւնների և հիմնարկութիւնների պարտաւորեցուցիչ ու կամաւոր փայերից և փայի վճարներից (§ 13)։

§ 25. Միութիւնը իր միջոցները ուժեղացնելու

նպատակով կարող է կնքել երկարատև և կարճատև փոխառութիւններ, փոխ առնել մասնաւոր անձնաւորութիւններից կառավարական, զեմստվային, կօօպերատիւ և այլ հիմնարկութիւններից, նոյնպէս և ընդունել աւանդներ այն չափերով ու պայմաններով, որը կորոշէ Լիազօրների Ժողովը։

§ 26. Պահեստի դրամագլուխը կազմում է Միութեան մաքուր օգուտի իւրաքանչիւր տարեայ յատկացումներից, ոչ պակաս քան 20%, պատահական մուտքերից և պահեստի դրամագլխի գումարի տոկոսներից։ Պահեստի դրամագլուխը նպատակ ունի ծածկել այն վնասները, որոնք կարող են առաջ գալ Միութեան գործողութիւններից։

§ 27. Պահեստի դրամագլուխը վերածուում է կամ պետական, կամ կառավարութեան կողմից ապահոված տոկոսաբեր թղթերի և կամ պահուում են վարկային կամ փոխատու-խնայողական հիմնարկութիւնների մէջ։

Պահեստի դրամագլխի ծախսերը համաձայն իր նշանակութեան (§ 26) կատարուում է միայն Լիազօրների Ժողովի որոշմամբ։ Պահեստի դրամագլխի այն գումարները, որոնք գերազանցում են Միութեան փայի դրամագլխի մի երրորդ մասը, կարող են տեղաւորուել շրջանառութեան մէջ կամ կայքերում։

§ 28. Միութիւնը կարող է նուիրատուութիւնների, անդամների կամաւոր վճարների օգուտների միջոցով կազմել յատկապէս առանձին դրամագլուխ տնտեսական, լուսաւորութեան, բարեգործական և յատուկ կարիքների համար գործադրելու նպատակով։

Այդ դրամագլուխը կազմելու, պահելու և ծախսելու կարգը որոշուում է Լիազօրների Ժողովի կողմից։

IV ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§ 29. Միութեան գործերի կառավարելը յանձնւում է ա) Լիազօրների Ժողովին, բ) Խորհրդին և գ) Վարչութեան։

Ծանօթութիւն, I.-Խորհուրդ հիմնելը վերապահւում է Լիազօրների Ժողովի որոշմանը։

Ծանօթութիւն, II.—Միութեան գործունէութիւնից առաջացող այլ և այլ հարցերի քննութեան համար, ինչպէս և Լիազօրների Ժողովի յանձնարարութիւնները կատարելու ու Միութեան զանազան տեսակի հիմնարկութիւնների և ձեռնարկութիւնների կառավարելու գործում Վարչութեան օգնելու նպատակով կարող են Լիազօրների Ժողովի կողմից ընտրել յատուկ յանձնաժողովներ։

Ա) ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ։

§ 30. Լիազօրների Ժողովները լինում են՝ ա) հերթական, որը Վարչութիւնը հրաւիրում է հաշուետուութեան, նախահաշուի, Միութեան գործունէութեան նախագծի և այլ հարցերի քննութեան վերաբերեալ, իսկ

անցած տարւայ հաշուետուութիւնը քննելու համար Վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր տարի հրաւիրել հերթական ժողով, ոչ ուշ, քան ապրիլ ամիսը։

բ) Արտակարգ՝ որը հրաւիրւում է Վարչութեան կամ Վարչութեան յայտնած գրաւոր պահանջով, (Խորհրդի), Վերաքննիչ Յանձնաժողովի կամ նրա անդամների մի տասներորդի կողմից։

Ծանօթութիւն։ Վարչութիւնը պարտաւոր է գումարել Լիազօրների Ժողով երկու շաբաթւայ ընթացքում. հաշուած այդպիսի պահանջը ստացուած օրից։ Այդ պայմանը չկատարելու դէպքում Ժողովը գումարւում է (Խորհրդի կամ) Վերաքննիչ Յանձնաժողովի կողմից։

§ 31. Լիազօրների Ժողովը կազմւում է ներկայացուցիչներից (§ 10), որոնք ընտրւում են Միութեան ընկերութիւնների և այլ հիմնարկութիւնների կողմից իրենց ընդհանուր ժողովներում չափահաս և իրենց կայքը տնօրինելու իրաւունք ունեցող անձերի թւից։

Միութեան անդամ եղող իւրաքանչիւր ընկերութիւն կամ այլ հիմնարկութիւն, որը ունի մինչև 200 անդամ, ուղարկում է վճռական ձայնի իրաւունքով մի լիազօր, 200-ից մինչև 500 անդամ ունեցողը —երկու, իսկ 500-ից աւելի ունեցողները—երեք։ Ընկերութիւնը կամ այլ հիմնարկութիւնը կարող է նոյնպէս ընտրել լիազօրների համար փոխանորդներ, որոնք մասնակցում են ժողովում լիազօրների իրաւունքով՝ վերջիններիս ժողովներին մասնակցելու անհնարին լինելու դէպքում։

Ծանօթութիւն.—Իւրաքանչիւր լիազօր ունի մէկ ձայն։ Ձայնի իրաւունքը ոչ ոքի չի կարելի յանձնել։

§ 32. Վարչութեան (և Խորհրդի) անդամները մասնակցում են Միութեան լիազօրների հետ ժողովում լիազօրների հետ հաւասար իրաւունքներով, սակայն առանց վճռողական ձայնի իրաւունքով, հետևեալ հարցերը քննելիս. 1) հաշուետուութեան հաստատում, մաքուր օգուտի գումարի որոշում ու բաշխում, 2) Վարչութեան (և Խորհրդի) անդամների գործունէութեան գնահատում ու նրանց վարձատրութեան գումարի սահմանում, և 3) նրանց դատաբանական պատասխանատուութեան ենթարկում։

§ 33. Լիազօրների ժողովի անմիջական որոշման են ենթակայ.

ա) Միութեան գործունէութեան նախագծի քննութիւնը ու հաստատումը և եկամուտների ու ծախսերի նահաշիւը.

բ) Վարչութեան (Խորհրդի և Վերաքննիչ Յանձնաժողովի անդամների ընտրութիւնը և նրանց քանակի որոշումը § § 43, 46 և 58 սահմաններում.

գ) Յանձնաժողովների ընտրութիւնը (ծանօթ. § 29) և նրանց գործունէութեան պայմանների որոշելը.

դ) Փոխառութիւններ կնքելու և աւանդներ ընդունելու պայմանների որոշումը.

ե) Անշարժ կայք ձեռք բերելու, գնելու և սեփականութիւնից դուրս հանելու (отчуждать) հարցերի լուծումն.

զ) Վարչութեան հաշուետուութիւնների քննութիւնը ու հաստատուն և օգուտների բաշխումն.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ.Բ.Ա. Центральная Библиотека
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(i-24083)

է) Միութեան ընկերութիւնները վարկ բաց անելու և նրանց քննութեան ենթարկելու ընդհանուր կանոնների հաստատումը.

ը) Առանձին (յատուկ) դրամագլուխ կազմելու և առհասարակ Միութեան բոլոր գործողութիւններին վերաբերող ցուցմունքների և կանոնների քննութիւնը ու հաստատումը այն դէպում, երբ կանոնադրութեան մէջ որոշուած չէ հաստատելու այլ կարգ.

թ) Պարտաւորեցուցիչ փայի մաս—մաս վճարելու որոշումը.

ժ) Լիազօրների ժողովին ներկայացրած Վարչութեան, (Խորհրդին) և Վերաքննիչ Յանձնաժողովին վերաբերող դանգատների լուծումը։

ժա) Վարչութեան, (Խորհրդի) և Վերաքննիչ Յանձնաժողովի անդամներին սխալ գործողութիւնների և զանցառութիւնների պատճառով պատասխանատուութեան ենթարկելու հարցի լուծումն.

ժբ) Անդամներին Միութիւնից հեռացնելու և դուրս եկածներին յետ ընդունելու հարցը.

ժգ) Կանոնադրութեան փոփոխման և լրացման հարցերի որոշումն.

ժդ) Միութեան լուծման հարցի որոշումը.

ժե) Լիազօրների ժողովի որոշումներից և ներկայ Կանոնադրութիւնից բղխող հարցերի քննութիւնն ու լուծումը։

§ 34. Լիազօրներին գումարելու կարգը կարող է հաստատել իրենց Լիազօրների ժողովում, սակայն, յամենայն դէպս, Միութեան անդամներին առնւազը մի շաբաթ առաջ պէտք է տեղեկացնի Լիազօրների ժողովի ժամանակի և տեղի, ինչպէս և քննութեան են-

թարկելիք հարցերի մասին։

§ 35. Լիազօրների Ժողովում պէտք է քննեն այն հարցերը, որոնք վերաբերում են Միութեան ներկայ կանոնադրութեամբ որոշած գործունէութեան։ Իւրաքանչիւր ժողովում քննում են միայն ծրագրում կամ նրա լրացուցիչ թերթիկում մատնանշած հարցերը։ Ժողովի ընդունած որոշումները պարտաւորեցուցիչ են Միութեան իւրաքանչիւր անդամի համար նոյնիսկ ժողովում նրա լիազօրները չգտնուելու դէպքում։

§ 36. Լիազօրների Ժողովը կայացած է համարւում, երբ ժողովում ներկայ է գտնւում ոչ պակաս, քան մի ներկայացուցիչ միութեան անդամների մի հինգերորդ մասի կողմից և յամենայն դէպս, ոչ պակաս, քան միութեան հինգ ներկայացուցիչները, չըհաշուած միութեան վարչական մարմինների անդամներին։

§ 37. Եթէ Լիազօրների Ժողովը չկայանայ § 36-ում ցոյց տուած անդամների թւի բացակայելու պատճառով, նշանակում է ոչ ուշ, քան երկու շաբաթւայ ընթացքում երկրորդ ժողովը, որը կայացած է համարւում լիազօրների ամէն մի թւի ներկայութեամբ։ Այդ մասին միութեան վարչութիւնը պարտաւոր է նախազգուշացնել միութեան անդամներին երկրորդ ժողովի հրաւիրագրում։ Այդպիսի երկրորդ ժողովում կարող են քննել միայն այն հարցերը, որոնք մտցրած են եղել օրակարգի մէջ։

§ 38. Ժողովը բացւում է վարչութեան նախագահի կամ նրա փոխանորդի կողմից և ընտրւում է նախագահ, նոյնպէս և ժողովի արձանագրութիւնները կազմելու համար քարտուղար։ Լիազօրների Ժողովի նախագահը չի կարող լինել Վարչութեան, (Խորհրդի), Վերաքննիչ Յանձնաժողովի և միութեան ծառայողների կազմից։ Խորհրդի կամ Վերաքննիչ Յանձնաժողովի կողմից ժողովը գումարելու դէպքում այդ ժողովը բաց է անում նրանց նախագահը ըստ պատկանելոյն։

§ 39. Միութեան կազմից անդամներ արտաքսելու, կանոնադրութեան լրացման կամ փոփոխութեան, միութեան գործերի լուծման հարցերը վճռելու համար պահանջւում է Միութեան բոլոր անդամների ոչ պակաս, քան կէսի ներկայ գտնւելը։

§ 40. Ժողովում գաղտնի քւէարկութեամբ են կատարւում պաշտօնակատար անձանց ընտրութիւնները և լուծւում Միութեան վարչական կազմի վարձատրութեան, պաշտօնակատար անձանց պատասխանատուութեան ու նրանց ծառայութեան ժամանակամիջոցից առաջ հեռացնելուն վերաբերող հարցերը։ Միւս պարագաներում քւէարկութեան ձևը կախւած է Լիազօրների Ժողովի հայեցողութիւնից։

§ 41. Լիազօրների Ժողովը իր որոշումներն ընդունում է ձայների սովորական մեծամասնութեամբ։ Միութիւնից անդամի արտաքսման, Վարչութեան, (Խորհրդի) կամ Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամի մինչև ժամանակամիջոցը լրանալը հեռացնելու, կանոնադրութեան փոփոխման և լրացման ու Միութեան գործերի լուծման վերաբերւող հարցերի որոշումները պէտք է ընդունւեն ոչ պակաս, քան բոլոր ձայների 2/3-ով։ Ձայների հաւասարութեան դէպքում հարցը համարւում է չլուծւած։

§ 42. Լիազօրների Ժողովի արձանագրութիւն-

դարի, Վարչութեան ներկայ գտնուող անդամների և ոչ պակաս քան երեք լիազօրների կողմից։ Եթէ լիազօրներից մինը Ժողովի որոշումը գտնում է հակառակ օրէնքի, կանոնադրութեան կամ Միութեան շահերին այդ դէպքում նա իրաւունք ունի յայտնել իր առարկութիւնը և մտցնել այդ արձանագրութեան մէջ, որպէս առանձին կարծիք։

Բ). ԽՈՐՀՈՒՐԴԸ

§ 43. Լիազօրների Ժողովին վերապահւում է իրաւունք Վարչութեան կից աւելի կարևոր հարցերը քննելու ու լուծելու համար հիմնել խորհուրդ, որի կազմը և գործողութիւնները որոշւում են Լիազօրների Ժողովի կողմից հաստատուող յատուկ ցուցմունքներով։

Գ). ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

§ 44. Վարչութիւնը կառավարում է Միութեան բոլոր գործերը և ներկայացնում է Միութիւնը նրա բոլոր գործերում, պայմանագրութիւններում և անձնաւորութիւնների ու հիմնարկութիւնների հետ տեղի ունեցող յարաբերութիւնների մէջ, առանց դրա համար յատուկ հաւատարմագրի։ Վարչութեան և նրա առանձին անդամների պարտականութիւնները, նրանց գործողութիւնների կարգը և իրաւունքների սահմանները որոշւում են ու փոփոխւում Լիազօրների Ժողովի ցուց-

§ 45. Մասնաւորապէս Վարչութեան վրայ է ընկնում՝

ա). Ապրանքների գնումը, վաճառումը ու պահելը և առհասարակ Միութեան բոլոր գործողութիւնների կիրառելը.

բ). Դրամի ընդունելն ու վճարելը, տոկոսաբեր թղթերի գնումը ու վաճառումը, Միութեան պատկանող և նրան պահ տրուած դրամների, արժէքների և կայքի պահելը.

գ). Մուրհակների, նոյնպէս և այլ ժամանակաւոր պարտաւորագրութիւնների տալը Լիազօրների Ժողովի հաստատած սահմաններում, վճարելու նպատակով ընդունելն ու շահելը.

դ). Միութեան անունից ամեն տեսակի պայմանագրութիւնների և պայմանների կազմելը.

ե). Անշարժ կայք ձեռք բերելու, սեփականութիւնից դուրս հանելու ու վարձելու մասին վաւերագրեր կազմելը։

զ). Միութեան շահերի պաշտպանութիւնը դատաստանական և վարչական հիմնարկութիւններում.

է). Միութեան գործավարութիւնը և հաշուետուութիւնը.

ը). Եկամտի և ծախսերի նախահաշիւ, գործողութիւնների նախագծի, տարեայ հաշուետուութեան ու հաշուեկշռի կազմելը և նրանց մտցնելը Լիազօրների Ժողով։

թ). Միութեան գործնէութեան տարբեր ճիւղերին վերաբերող ցուցմունքներ ու կանոններ կազմելն ու նրանց մտցնելը Լիազօրների Ժողով.

ժ). Առանձին յանձնաժողովներ կազմելը այն [illegible] իրաւունքը Վարչութեան է վե-

բապահուած Լիազօրների Ժողովի կողմից.

ժա). Միութեան գործերի համար աշխատելու նպատակով պաշտօնեաներ հրաւիրել ու վարձելը և նրանց հեռացնելը այն սահմանափակումներով, որոնք հաստատուած կլինեն այդ հարցի վերաբերեալ Լիազօրների Ժողովի կողմից.

ժբ). Միութեան ծառայութեան մէջ ընդունուած պաշտօնեաների հաւատարմագրեր տալը.

ժգ). Միութեան անդամների փայավճարների ցուցակագրումը՝ ցոյց տալով նրանց պատասխանատուութեան չափը, Միութեան պարտաւորութիւնների վերաբերեալ.

ժդ). Լիազօրների Ժողովի որոշումներից և կանոնադրութիւնից բղխող այլ և այլ գործերը.

§ 46. Վարչութիւնը բաղկացած է ոչ պակաս քան երեք անդամից, որոնք ընտրւում են երեք տարի ժամանակով, գաղտնի քուէարկութեամբ. Լիազօրների Ժողովում, Միութեան անդամների թւից։ Նոցա համար ընտրւում են նոյն կարգով ոչ պակաս քան երեք փոխանդամներ, որոնք փոխարինում են վարչութեան բացակայող կամ դուրս եկած անդամներին՝ նրանց ստացած ընտրական ձայների առաւելութեան կարգով։ Վարչութեան անդամի պաշտօնը վարելու ժամանակ թեկնածուն օգտւում է այդ պաշտօնին յատուկ բոլոր իրաւունքներով ու արտօնութիւններով։

Ծանօթութիւն.—Վարչութեան անդամների թիւը որոշւում է Լիազօրների Ժողովի կողմից նայած Միութեան գործողութիւններին։

§ 47. Միութիւնը հիմնելուց յետոյ ընտրուած Վարչութեան անդամների մի երրորդ մասը դուրս է գալիս իւրաքանչիւր տարի. առաջին երկու տարիները վիճակով։ Յետագայում իւրաքանչիւր տարի դուրս գալը կատարւում է ըստ ընտրութեան աւագութեան։

Ծանօթութիւն.—Վարչութիւնից դուրս եկող անդամը կարող է նորից ընտրւել։

§ 48. Վարչութեան, ինչպէս և Խորհրդի ու Վերաքննիչ Յանձնաժողովի մէջ (§§ 43, 46 և 58) չեն կարող մտնել Միութեան պէս միատեսակ առևտրական և արդիւնաբերական գործ ունեցողները, նոյնպէս և Միութեան ծառայողները։

§ 49. Վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ ու քարտուղար և բաժանում է իր անդամների մէջ պարտականութիւնները։

Ծանօթութիւն.—Եթէ հաշւապահութիւն յանձնարարւած կլինի Վարչութեան անդամներից մէկին, հաշւապահի պարտականութիւնները ոչ մի դէպքում չեն կարող միացուել գանձապահի պարտականութիւնների հետ։

§ 50. Վարչութեան նիստերը կայացւած են համարւում, երբ ներկայ են գտնւում վարչութեան անդամների ոչ պակաս, քան կէսը, նոյն թւում նախագահը կամ նրա փոխանորդը։

Ծանօթութիւն.—Վարչութեան նիստերին կարող են ներկայ գտնուել առանց վճռական ձայնի իրաւունք Վարչութեան փոխանդամները, խոր-

նաժողովի, նոյնպէս և Վարչութեան կողմից հրաւիրուած տեղեակ անձնաւորութիւնները։

§ 51. Վարչութեան մէջ բոլոր հարցերը որոշւում են ձայների սովորական մեծամասնութեամբ. ձայների հաւասարութեան դէպքում հարցը համարւում է չլուծուած։ Վարչութեան որոշումներն արձանագրւում են մատեանի մէջ և ստորագրւում ներկայ գտնուող անդամների կողմից։

§ 52. Մուրհակները, հաւատարմագրերը, պայմանաւորումները, պայմանները, կալուածագրերը և այլ վաւերագրերը, նոյնպէս և վարկային հաստատութիւններից Միութեան ստանալիք դումարների պահանջները պէտք է ստորագրուեն Վարչութեան նախագահի կամ նրա փոխանորդի և բացի այդ Վարչութեան անդամներից մէկի կողմից։

§ 53. Վարչութեան անդամները կարող են ստանալ վարձատրութիւն, Լիազօրների Ժողովի գաղտնի քուէարկութեան որոշմամբ։

§ 54. Վարչութեան անդամները կարող են հեռացուել իրենց պարտականութիւնները կատարելուց Լիազօրների Ժողովի գաղտնի քուէարկութեամբ նաև մինչև այն ժամանակամիջոցի լրանալը, որի համար նրանք ընտրուած են։

§ 55. Կանոնադրութեան, նոյնպէս և Լիազօրների Ժողովի որոշումների խախտման դէպքում Վարչութեան անդամները պատասխանատու են Միութեան առաջ օրէնքի հիման վրա, այն վնասների համար, որոնք

V. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

§ 56. Միութեան վարչական մարմինների գործունէութեանը հսկելու, նրա գործերը քննելու և հաշուետուութիւնը ստուգելու համար իւրաքանչիւր տարի Լիազօրների Ժողովն ընտրում է Վերաստուգիչ Յանձնաժողով։

§ 57. Վերաստուգիչ Յանձնաժողովը բաղկացած է ոչ պակաս, քան երեք անդամից երեք փոխանդամներով, ընտրուած մի տարի ժամանակամիջոցով, և գաղտնի քուէարկութեամբ, Միութեան ընտրութիւնների այն անդամների թուից, որոնք չեն պատկանում Վարչութեան, Խորհրդի և Միութեան ծառայողների կազմին։

Ծանօթութիւն.—Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամների և նրանց փոխանդամների թիւը որոշում է Լիազօրների Ժողովը։

§ 58. Նախագահին վերաբերող կանոնները, նոյնպէս և Վարչութեան անդամների պատասխանատուութեան, վարձատրութեան, գործողութիւնների կարգին և կազմին վերաբերող կանոնադրութեան յօդուածները (§§ 48—51, 53 և 54) կիրառւում են և՛ Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամների վերաբերեալ։

§ 59. Մանաւորապէս Վերաստուգիչ Յանձնաժո-

ա). Միութեան կանխիկ դրամների, տոկոսաբեր թղթերի և այլ արժէքների պարբերական ստուգումն ու նրանց համեմատական բաղդատութեանը հաշիւների և մատեանների հետ.

բ). Միութեան հիմարկութիւններում գտնուող պատրաստի ապրանքների ստուգումը և որոշելը, թէ որքան է համապատասխանում այդ մատեաններին. Միութեան կամ նրան յանձնուած ամեն տեսակ կայքի ստուգելը և այդ բոլորը այն ժամանակամիջոցներում, որ կհաստատի Լիազօրների Ժողովը կամ հարկաւորութեան դէպքում Յանձնաժողովի հայեցողութեամբ.

գ). Վարչութեան դէմ գանգատ ներկայացնելու դէպքում նրա քննութիւնը.

դ). Վաւերաթղթերի, մատեանների և հաշուեւութիւնների ստուգումը ու Լիազօրների Ժողովին իր եզրակացութիւնները ներկայացնելը թէ տարեկան հաշուեւութեան, նախահաշուի ու գործողութիւնների նախագծի վերաբերեալ և թէ տարուայ ընթացքում կատարած Միութեան գործողութիւնների ստուգման մասին։

§ 60. Վերաստուգիչ Յանձնաժողովը գումարուում է հարկաւորութեան չափ։ Յանձնաժողովը ստուգման գործողութիւնները կարող է յանձնարարել իր առանձին անդամներին։ Վերաստուգիչ Յանձնաժողովը իր բոլոր գործողութիւնների մասին արձանագրում է առանձին մատեանի մէջ։

§ 61. Վարչութեան դէմ գանգատների, նոյնպէս և հաշուապահութեան, գանձարանի և այլ ստուգման պարզած հանգամանքներում Վերաստուգիչ Յանձնաժողովը ցուցմունքներ է տալիս Վարչութեան, նրա թոյլ տուած սխալ կամ Մեղ[illegible]

[illegible]ան գործողութիւնների վերաբերեալ։ Միութեան գործերում աւելի էական անկարգութիւններ կամ զեղծումներ պարզելու դէպքում՝ Վերաստուգիչ Յանձնաժողովը հրաւիրում է Լիազօրների արտակարգ ժողով (§ 33)։

§ 62. Վերաստուգիչ Յանձնաժողովի դէմ եղած գանգատները ներկայացնում են Լիազօրների Ժողովին բայց ոչ այլ կերպ, քան Յանձնաժողովի միջոցով, որը պարտաւոր է ներկայացնել այդ մօտակայ ժողովին իր բացատրութիւններով։

§ 63. Անկախ Միութեան և Վերաստուգիչ Յանձնաժողովի գործերի ստուգումից. Միութիւնը, եթէ նամանում է սպառողական ընկերութիւնների աւելի խոշոր միութեան կազմի մէջ, ենթարկուում է այդ միութեան մարմինների նշանակած լիազօրների հսկողութեան ու քննութեան։

§ 64. Միութեան մարմինների հսկողութեան ու քննութեան հետ կապուած պարտականութիւնները կատարելուց, քննութեան ենթարկող Վարչութիւնը և Խորհուրդը պէտք է աջակցեն նրանց, բայանեն նրանց համար հաշիւները ու մատեանները և թոյլ տան ծանօթանալ Միութեան բոլոր գործերին ու հիմարկութիւններին։

VI. ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՇՒԵՏՒՈՒԹԻՒՆԸ

§ 65. Միութիւնը պարտաւորեցուցիչ կերպով պահում է մատեաններ, որոնց մէջ մտցուում են՝

ա). Միութեան բոլոր շրջանառութիւնների վերաբերեալ ընդհանուր մուտքը և ելքը.

բ). Միութեան շրջանառութիւնների իւրաքանչիւր տեսակի համար առանձին մուտքի և ելքի հաշիւը.

գ). Միութեան հաշիւներն առանձին իւրաքանչիւր անձնաւորութեան և հիմնարկութիւնների հետ։

§ 66. Իւրաքանչիւր անցած տարեայ վերաբերեալ՝ Վարչութեան կողմից կազմուում է Լիազօրների Տարեկան Ժողովին քննութեան ու հաստատման ներկայացնելու համար տարեայ մանրամասն հաշուետուութեան Միութեան գործողութիւնների և նրա շրջանառութիւնների հաշուեկշռի, նոյնպէս և գալիք տարեայ նախահաշուի ու գործողութիւնների նախագծի մասին։

§ 67. Միութեան հաշուետուութեան տարին համարուում է յունուարի 1-ից մինչև դեկտեմբերի 31, իսկ եթէ Միութիւնը իր գործողութիւնները սկսել է տարեայ ընթացքում, այդ դէպքում առաջին հաշուետուութեան տարին համարուում է նրա գործողութիւնների օրից հաշուած մինչև նոյն կամ հետեւեալ տարեայ դեկտեմբերի 31։

Ծանօթութիւն.—Հաշուետուութեան տարին չպէտք է գերազանցի 18 ամիս։

§ 68. Հաշուետուութիւնը իր մանրամասն մեկնութեան մէջ պէտք է պարունակէ հետեւեալ գլխաւոր յօդուածները 1). գանձարանի հաշիւը, 2). դոյքի և անշարժ կայքի հաշիւը, 4). դրամագլխի հաշիւը՝ փայի, հիմնական և այլն, 5). զանազան անձնաւորութիւնների Միութեան պարտքերի և Միութիւնից զանազան հիմնարկութիւններին և անձնաւորութիւններին հասանելիք պարտքերի հաշիւը, 6). Միութեան գործերի համար կատարած ծախսերի հաշիւը, 7). օգուտների և վնասների հաշիւը, 8). վերջնական հաշուեկշռի հաշիւը և 9), մաքուր օգուտն ու նրա օրինակելի դասաւորումը։

§ 69. Հաշուետուութիւնը պէտք է կազմուած լինի և ստորագրուի Վարչութեան և Վերաստուգիչ Յանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան հետեւեալ տարեայ մայիսի 1 և առնուազն երկու շաբաթ առաջ Լիազօրների Ժողովից, որին այդ հաշուետուութիւնը պէտք է ներկայացուի։ Այդ երկու շաբաթուայ ընթացքում մատեանները ու վաւերագրերը Վարչութեան գրասենեակում որոշ ժամեր պէտք է տրամադրուեն լիազօրների հայեցողութեան։

§ 70. Լիազօրների Ժողովի հաստատած հաշուետուութիւնը պահուում է Միութեան գործերում և նրա պատճէից երկու օրինակ ներկայացուում է այն միութեան, որին անդամագրուած է Միութիւնը։

VII. ՕԳՈՒՏՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 71. Մաքուր օգուտը, դուրս հանած դրանից ոչ պակաս քան 20% պահեստի դրամագլխին և ոչ պակաս քան 10% հիմնական, Լիազօրների Ժողովի կողմից բաժանվում է ա). փայերի շահի ոչ աւել 6%-ից, բ). գնողներին և անդամներին սպառողական օգուտին գ). յատուկ դրամագլուխ կազմելու, նոյնպէս և ներկայ կանոնադրութիւնից բղող մեւս նպատակների համար։ Բաժնեաշէի և սպառողական օգուտի չափը որոշվում է Լիազօրների Ժողովի կողմից։

§ 72. Միութեան անդամի բաժնին հասանելիք օգուտը և սպառողական շահը տրվում է հաշուետուութիւնը հաստատելուց յետոյ երեք ամսայ ընթացքում և այն էլ միայն այն դէպքում, եթէ անդամի կողմից մտցված են բոլոր պարտադիր փայերը (§ 13)։ Այլ դէպքում օգուտը և սպառողական շահը յատկացվում են նրա փայերի վճարներին։

Ծանօթութիւն. I.—Հասանելիք գումարները երեք ամսայ ընթացքում չստանալու դէպքում համարվում են մտցված նոր փայեր կազմելու նպատակով։

Ծանօթութիւն II.—Լիազօրների Ժողովը կարող է որոշում կայացնել յատկացնելու օգուտը Միութեան անդամների փայերի վճարներին և նոցա ձեռքը չտալու, բացառութեամբ այն դէպքերի, որոնք ցոյց են տրված § 20-ում։

§ 73. Միութեան շրջանառութիւնների վերաբերեալ առաջացած վնասը ծածկվում է պահեստի և հիմնական դրամագլխից։

Եթէ այդ միջոցով վնասը չծածկվի, Լիազօրների Ժողովը պակասող գումարը պէտք է բաժանի Միութեան անդամների մէջ պարտաւորեցուցիչ փայերի վճարների գումարի համաչափութեամբ (§ 13) ու ժամանակամիջոց նշանակի ոչ ուշ, քան տարեայ վերջը իւրաքանչիւրն իր բաժինը վճարելու նպատակով։ Չը-վճարելու դէպքում Վարչութիւնը պահանջում է չվճարած անդամից հասանելիք գումարը կամ նրան պատկանող փայերով ծածկում է վերը յիշած բաժանումից այդ անդամից ստացվելիք գումարը։

VIII. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

§ 74. Միութիւնը լուծման է ենթարկվում՝

ա.) Լիազօրների Ժողովի որոշմամբ,

բ.) Եթէ Միութեան կազմի մէջ կլինեն երեքից պակաս անդամներ և

գ). Սնանկութեան դէպքում։

§ 75. Միութեան լուծման հարցը առաջ գալու պարագաներում Վարչութիւնը պարտաւոր է անմիջապէս գումարել Լիազօրների Ժողով, որը որոշում է կայացնում Միութեան լուծման (լիկվիդացիայ) վերաբերեալ կամ միջոցներ է ձեռնարկում վերացնելու այն պայմանները որոնք առաջ են բերում լուծումը։

§ 76. Միութեան լուծման համար պահանջվում է, որ այդ մասին որոշումը հաստատված լինի երկրորդ

անգամ այդ նպատակով գումարված Լիազօրների Ժողովի կողմից ոչ շուտ, քան մի ամսից յետոյ ոչ ուշ, քան առաջին որոշումից մի տարի յետոյ, այն էլ ոչ պակաս, քան ձայների 2/3-ի մասով։

§ 77. Միութեան լուծման հարցի մասին (§§ 75-76) Լիազօրների Ժողովի կայացած որոշումը յայտնւում է Շրջանային Դատարանին և յայտարարւում տեղական լրագիրներից մէկում։

§ 78. Միութեան լուծման դէպքում § 74 ա. և բ. կէտերի հիման վրայ լուծումը կատարւում է Վարչութեան կողմից, եթէ Լիազօրների Ժողովը դրա կատարելը չի յանձնարարի յատուկ ընտրված ոչ պակաս քան երեք լուծողներին։

§ 79. Լուծողները ենթարկւում են Վարչութեան անդամների համար հաստատած ընդհանուր կանոններին, նոյն հիմքերով պատասխանատու են Միութեան հասցրած վնասների համար ու նոյնպէս ենթարկւում են Վերաստուգիչ Յանձնաժողովի հսկողութեան։

§ 80. Լուծողները հրաւիրում են Միութեան պարտատէրերին յայտարարութեան և հրաւիրագրի միջոցով միջոցներ են ձեռք առնում նրանց բաւարարելու, վաճառում են Միութեան կայքը ու մտնում համաձայնութեան մէջ և հաշտեցուցիչ պայմանաւորումներ կազմում երրորդ անձնաւորութիւնների հետ այն հիմքերով ու սահմաններում, որոնք ցոյց կտրւեն Լիազօրների Ժողովի կողմից։

§ 81. Միութեան բոլոր պարտաւորագրութիւնները ծածկելու համար նրա կայքը անբաւական գտնելու դէպքում, լուծողները գործում են համաձայն

Միութեան անանկութեան պարագայում նրա անդա
ների պատասխանատուութեան օրէնքի հիման վ
«Կոօպերատիւ ընկերակցութիւնների և նրանց Միութի
ների կանոնադրութեան» յ. յ. 49–51)։

§ 82. Միութեան անդամների վրա բաժանւ
վնասները դուրս հանելով նրանց փայերից վերջին
մնացորդը կարող է վերադարձնել Միութեան պար
քերը ծածկելուց և լուծողների հաշուետուութիւնը Լիա
զօրների Ժողովի կողմից հաստատելուց յետոյ, սակա
յամենայն դէպս, ոչ շուտ, քան մի տարուց յետ
հաշված այն օրից, երբ յայտարարված է լուծումը նշ
նակելու մասին։ Միութեան վիճելի և այն ժամանակ
դեռ չի լրացած, պարտքերը բաւարարելու համա
անհրաժեշտ գումարը լուծողները առանձնացնում են

Այդ յօդուածի կանոնները խախտող լուծողներ
պատասխանատու են հաւաքաբար և թէ Միու
թեան և թէ նրա պարտատէրերի առաջ (§ 80)։

Այդպիսի պատասխանատուութիւն ընկնում է նոյն
պէս և Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամների վրա
եթէ նրանք այդ խախտումները պարզելուց յետոյ չե
յայտնել դրա մասին գրաւոր կերպով։

§ 83. Միութեան պարտքերը վճարելուց և ան
դամների փայերի վճարները վերադարձնելուց յետոյ
մնացած կայքը գործադրւում է կօոպերատիւ այլ հան
ըօգուտ նպատակների վրա Լիազօրների լուծող (лик
видаціонное) Ժողովի որոշմամբ։

§ 84. Լուծումը վերջացնելով լուծողները կազմուս
են իրենց գործողութիւնների մասին հաշուետուութիւն,
որը ներկայացնում են Վերաստուգիչ Յանձնաժողով

բակացութիւններով Լիազօրների ժողովի հաստատան։

Վերջացրած լուծման հաշուեւուութիւնը հաստատելուց յետոյ՝ յայտնւում է Շրջանային Դատարանին օպերատիւ Ընկերութիւնների մասնանի մէջ համատասխան արձանագրութիւն մտցնելու և «Սենատի յայտարարութիւնների» մէջ յայտարարելու նպատակով։

Լուծողները Միութեան մատեանները, գործերը վաւերաթղթերը յանձնում են Շրջանային Դատարանին, որը և պահում է տասը տարուայ ընթացքում՝ ոչնչացրելով Միութեան նախկին մասնակցող անդամների և նրա պարտատէրերին ծանօթանալ նրանց, և այլ է պատճէններ, քաղուածքներ ու տեղեկութիւններ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI 1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0944074

ԱԳ-2
2403

ՄԱՏԵՆԱՇԱՐ „ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՈՒՅՍ ՏԱ

1. Երևանեան Նահանգի Կօօպ. Միութեան
կանոնադրութիւնը, գինն է 1 ր. 30 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Շապիրօ-«Կօօպերացիայի տեսականն և գործնականը» և ուրիշ գրքեր։

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՕՕՊԵՐԱՑԻԱ“

Երկշաբաթաթերթ

Բաժնեգինը՝ 3 ամիսը 10 ր.
Հատով՝ 2 ր.
Արտասահմանը՝ կրկնակի։
Յայտարարութիւնները՝ տողը՝ 20 կոպ.
Հասցէ՝ Երևան Կօօպերատ. Միութիւն

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

«Հայաստանի Կօօպերացիա»յին կարելի է բաժանորդագրուել և Մատենաշարի գրքերը գնել Հայաստանում գտնուող բոլոր կօօպերատիւ ընկերութիւնների մօտ և կամ թերթի խմբագրատան։